ԱՐՇԱԿ ԲԱԼՅԱՆ

ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ. ՎԱՂ ՇՐՋԱՆ

Նվիրվում է Սիմոն Վրացյանի ծննդյան 125 -ամյակին

Ժողովրդի պատմության էջերում որոշակի դեր խաղացած անհատի գործունեության լուսաբանման, արժևորման ու գնահատման կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում ներկայացնել այն միջավայրը, որում նա ծնվել, դաստիարակվել, կրթություն ստացել ու կազմավորվել է որպես անհատականություն: Այդ առումով հետաքրքրություն է ներկայացնում նշանավոր հասարակական-քաղաքական, ազգային պետական գործիչ, Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիրներից մեկը՝ Սիմոն Ղազարի Վրացյանը:

Սիմոն Վրացյանը (Սիմավոն Ղազարոսի Գռուզյան) ծնվել է 1882 թ. մարտի 24-ին Ղրիմից գաղթած, Ռոստովի մերձակայքում՝ Մեծ Սալա գյուղում հաստատված, գյուղացու ընտանիքում[1]: Նրա հայրը երբեմնի հարուստ, բայց աղքատացած Մերկյան Քերոբի ժառանգներից էր՝ չարքաշ հողագործ և վարձու գյուղական աշխատավոր: Ավելի ուշ, երբ որդին տնից հեռու էր, հայրը՝ Ղազարոսը, Նոր Նախիջևանում իջևանատուն ուներ և ապրում էր ավելի բավարար նյութական պայմաններում: Ղազարոսի ընտանիքը կրում էր Գռուզյան (Գրուզյան) ազգանունը, համաձայն ընտանեկան ավանդության ‹‹գռուզ›› (գանգուր) մազեր ունենալու պատճառով, որը դպրոցում դարձավ Գրուզինյան, ապա թարգմանվեց հայերեն՝ Վրացյան[2]:

Ընտանիքի կազակական բնակավայր տեղափոխվելու պատճառով Ս. Վրացյանը սկզբնական կրթությունն ստացել է ռուսական դպրոցում, մի հանգամանք, որը չափազանց վշտացրել է ավանդապահ ու հավատացյալ մորը: Ինչպես վկայում է Ս. Վրացյանն իր հուշերում, մայրն անընդհատ կրկնում էր. ‹‹Վախ, վախ, զավակներս ձեռքե կերթան››[3]: Իսկ երբ հայրը նրան տանում է ռուսական դպրոց, մոր վերջին խոսքը լինում է. ‹‹Նայե, հայնակ չմոռնաս››[4]:

Հայրենի գյուղում, ուր ընտանիքը շուտով վերադառնում է, Ս. Վրացյանի առաջին ուսուցիչը եղավ Խաչիկ վարժապետը, որը դասավանդում էր գյուղական Ս. Համբարձ-

---

[1] Կենսագրական տվյալները քաղված են Հայաստանի Ազգային արխիվից (այսուհետև՝ ՀԱԱ) պահվող վավերագրերից և հեղինակի հուշագրությունից. ֆ. 198, ց. 1, գ. 39, թ. 48, գ. 65, թ. 16 և շրջ., ֆ. 227, ց. 1, գ. 289, թ. 1, ֆ. 312, ց. 2, գ. 386, թթ. 1 և շրջ, թ. 3, 4 շրջ., 6 - 14, 16 - 20, Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, Դեպքեր, Դեմքեր, Ապրումներ, Բ հատ., Պեյրութ, 1960, էջ 14 - 74, Ա հատ., Պեյրութ, 1967, էջ 21 - 47, “Բագին” ամսագիր, Բեյրութ, 1969 № 7, էջ 42 - 45:

[2] **Վրացյան Ս.,** Կյանքի ուղիներով, Ա հատ., էջ 41:

[3] **Վրացյան Ս**., նշվ. աշխ., Բ հատ., էջ 11:

[4] Նույն տեղում, Ա հատ., էջ 27:

ման ծխական դպրոցում և լավ երգում էր ու վայելում գյուղացիների սերն ու հարգանքը: Գյուղի տարրական նախակրթարանն ավարտելուց հետո նա կրթությունը շարունակում է Նոր Նախիջևանի թեմական դպրոցում: Հուշագրության էջերում նա երախտագիտությամբ է հիշում թեմականում սովորելու տարիները, հատկապես դպրոցում տիրող ավանդապաշտ հայկական ոգին. ‹‹Հանդեսներում արտասանում էին Գամառ Քաթիպայի հրաշունչ ազատության երգերը, ճառերի մեջ շեշտում էին ազգ և եկեղեցի, սիրված երգերն էին ‹‹Ծիծեռնակ››, ‹‹Արի, իմ սոխակ››, ‹‹Հայրիկ, Հայրիկ››, ‹‹Լռեց, ամպերը››... : 90-ական թվականների վերջին տարիներն էին, հեղափոխական երգերի մասին դեռ գաղափար չուներ նոր-նախիջևանցին››[5]: Նրա ուսուցիչներն են եղել սարկավագ Գ. Չորեքչյանը՝ ապագա Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ 6-րդը, Ե. Շահազիզը, Ա. Զամինյանը, Վ. Քիրլյանը:

1900 թ. Ս. Վրացյանը իբրև Նոր Նախիջևանի եկեղեցական հոգաբարձության որդեգիր՝ ընդունվում է Գևորգյան Ճեմարանի դպրոցական բաժնի 4-րդ դասարանը: Ճեմարանի լսարանը Ս. Վրացյանը ավարտում է 1906 թ.: Նրա ավարտական թեզի՝ ‹‹Ղրիմի հայերի գաղթականությունն ու պատմությունը›› աշխատանքի վրա Ճեմարանի բազմամյա ուսուցիչ Ս. Կանայանը մակագրում է՝ ‹‹Հույժ գովելի››: Ս. Վրացյանը ‹‹գովելի›› գնահատականով Ճեմարանն ավարտելով՝ ստանում է մանկավարժ-ուսուցչի որակավորում (համազոր է մեր ժամանակների բարձրագույնին):

Ճեմարանում Ս. Վրացյանն աշակերտում է 20-րդ դարի առաջին տասնամյակների լավագույն հայ գիտնական, հասարակական, գրական գործիչ-մանկավարժների, Եվրոպայի և Ռուսաստանի մանկավարժական, գիտական օջախներում կրթություն ստացած, առաջադեմ գաղափարներով տոգորված հայրենասերների մի փայլուն բույլի, որոնց, տարիներ անց, իր հուշագրության էջերում նա ջերմ ու երախտագիտության տողեր է նվիրում. Մ. Աբեղյան, Հ. Մանանդյան, Գ. Հովսեփյան, Կ. Տեր-Մկրտչյան, Կոմիտաս, Ս. Կանայան, դաստիարակներ Հ. Գրիգորյան, Գ. Ղազարյան և այլք: Առանձին սիրով է հիշատակում Կոմիտասին, նրա դասերն ու ուխտագնացությունները Հայաստանի սրբավայրերը:

Ճեմարանի հանդեպ Ս. Վրացյանն ունեցել է հատուկ վերաբերմունք, անվանել այն ‹‹լույսի աղբյուր››: Ս. Վրացյանը հավաստի ներկայացրել է այն կրթական-դաստիարակչական միջավայրը, որը ծնունդ տվեց հայկական քաղաքական կյանքի մի ամբողջ շարք նշանավոր գործիչների: ‹‹Մթնոլորտն ինքնին բավական էր, որ մեր մեջ զարգանար ազգային ոգին, բայց դրան մեծ չափով նպաստում էր և դպրոցական միջավայրը: Մեր ամբողջ ժամանակը անցնում էր կա՛մ դասարանում, ուսուցիչների հետ, կա՛մ մտավոր զրույցներով ու վեճերով և կա՛մ ընթերցանությամբ››, - գրել է նա[6]: Ս. Վրացյանը չափազանց բարձր է գնահատում Ճեմարանի խաղացած դերը հայոց ազգային կյանքի բոլոր բնագավառներում և մասնավորապես իր կյանքում: Իբրև հայ մարդու, հայ գործչի բնավորության, հետաքրքրությունների, հայացքների ձևավորման

[5] **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., Բ հատ., էջ 11:
[6] **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., Բ հատ., էջ 51:

վրա Ճեմարանի ազդեցությունը, հիրավի, Վրացյանը համարում է դրական իմաստով անջնջելի: Այդ կապակցությամբ հետաքրքրություն է ներկայացնում նրա ինքնախոստովանությունը. ‹‹Եթե ես կյանքումս որևէ մի լավ բան եմ արել հայ ժողովրդի համար, այդ ամենը պարտական եմ Ճեմարանին, ուր կազմավորվեց իմ նկարագիրը, ուր ես կարողացա խորացնել իմ մտավոր զարգացումը, ձեռք բերել սեփական աշխարհայացք, լայնացնել մտքիս հորիզոնը››[7]:

Ս. Վրացյանի հետ լսարանական բաժինն ավարտած վեց սաները հետագայում դարձան հասարակական-պետական գործիչներ, ուսուցիչներ. Արշավիր Շավարշյան, Անուշավան Տեր-Միքայելյան, Արշավիր Քյոսապալյան, Մարտիրոս Ստեփանյան, Արամ Դադյան, Արշավիր Տեր-Մկրտչյան, Եփրեմ Սարգսյան[8]:

1906 թ. ավարտելով Ճեմարանը՝ Ս. Վրացյանը վերադառնում է ծննդավայր՝ ուսումը շարունակելու հաստատ մտադրությամբ, սակայն միայն 1908 թ. է նրան հաջողվում ընկերների նյութական աջակցությամբ մեկնել Ս. Պետերբուրգ: Նա արձանագրվում է համալսարանի իրավաբանական բաժնում և միաժամանակ բարձրագույն ուսումնական ճեմարանում[9]: Ուսումն ավարտում է 1910 թ.:

Նոր Նախիջևանը թեև հեռու էր մայր հայրենիքից, բայց ապրում էր նույն մտահոգություններով: Հասարակական կյանքը համակված էր ազգային ազատագրական պայքարի գաղափարներով, երիտասարդության միջավայրում թևածում էին Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Ռաֆֆու ազատատենչ ոգիները:

Հարկ է շեշտել, որ Նոր Նախիջևանի թեմական դպրոցում սովորելու ժամանակ Ս. Վրացյանը տարվել է Ռաֆֆու ու Պատկանյանի ստեղծագործությունների ընթերցմամբ: Նրա աշխարհայացքի վրա այդ ազդեցությունը հատկապես բացահայտվում է հուշագրության էջերում: Նա հաճախ է դիմում իր սիրած հեղինակների գործերից մեջբերումների: Ռ. Պատկանյանի հետևյալ տողերը հաճախակի են հանդես գալիս նրա հուշագրության էջերում.

Ի՞նչ եք փնտրում Հյուսիսում,
Ա՜յ, խելացնոր, գիժ հայեր...

Իսկ Ռաֆֆու նկատմամբ Վրացյանը պարզապես պաշտամունք է ունեցել. ‹‹Հայ հեղինակներից իմ վրա ամենից ուժեղ ազդեցություն է ունեցել Ռաֆֆին, որի մեծ վեպերը Ճեմարանում ես կարդացել եմ մի քանի անգամ: Եվ այսօր էլ, ինձ թվում է, Ռաֆֆին շարունակում է մնալ հայ ամենամեծ գրողը: Չկա մեկը, որ գերազանցեր նրան››[10]:

Ս. Վրացյանը, ըստ իր հուշագրության, Հ. Յ. Դաշնակցությանն անդամագրվում է տակավին Նոր Նախիջևանի թեմական դպրոցում ուսանելիս և բոլորովին պատահական կերպով: Նրա պատճառաբանությունը միանգամայն համոզիչ է և բնական: Հասարակական իրադարձությունների հորձանուտում, երբ հայկական միջավայրում նոր-

[7] Նույն տեղում, էջ 46:
[8] Նույն տեղում, էջ 69:
[9] Նույն տեղում, Ա հատ., էջ 48 - 62:
[10] **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., Բ հատ., էջ 52:

նոր ձևավորվող կուսակցությունները որոշակի չէին սահմանազատել իրենց գաղափարական կողմնորոշումները, Ս. Վրացյանի նման հայրենասիրական ոգով դաստիարակված երիտասարդը հեշտությամբ կարող էր հափշտակվել հեղափոխական անունը կրող կուսակցությամբ: Գևորգյան Ճեմարանում սովորելու վերջին տարիներին Ս. Վրացյանը ներգրավվում է հասարակական-քաղաքական շարժումների մեջ. նա մասնակցում է հայկական աշակերտական հավաքներին, Դաշնակցության երիտասարդական կազմակերպությունների աշխատանքներին:

Գևորգյան Ճեմարանում գործում էին դաշնակցական մի շարք գաղտնի խմբեր Վաղարշապատի կոմիտեի վերահսկողության ներքո: Խմբերն ունեին պայմանական անուններ՝ Դաշույն, Վրեժ, Սասուն, Չոբանքյարա և այլն[11]: Խմբերում քննարկվում էր հեղափոխական գրականություն, մերձակա գյուղերում զբաղվում էին քարոզչությամբ: Ս. Վրացյանը գործուն մասնակցություն ուներ այս խմբակների աշխատանքներին: Ճեմարանում տիրող տրամադրությունների վերաբերյալ Ս. Վրացյանը հետևյալն է գրում. ‹‹Մինչև 1904 թվականը արտաքին կյանքը շատ չէր թափանցել Ճեմարանից ներս: Եվ ուսուցիչ ու աշակերտ ապրում էին անվրդով ու համերաշխ: Եկեղեցական կալվածների գրավման առաջ բերած հեղափոխական հուզումը հափշտակեց և ճեմարանցիներին, որոնք բաժանվեցին հակամարտ հատվածների, ըստ քաղաքական համոզման››,- գրում է նա և ընդգծում, որ աշակերտների կեսից ավելին դաշնակցական էին[12]: Ցարական իշխանությունների վարած հայահալած քաղաքականությունը, մասնավորապես 1903 թ. հունիսի 12 -ի օրենքը[13] հայ եկեղեցապատկան գույքի և կալվածքների բռնագրավման ու պետականացման մասին, ավելի են սրում իրադրությունը: Հավելենք, որ 1905 թ. տեղի ունեցած հայ-թաթարական արյունահեղ կռիվները ավելի բորբոքեցին արդեն իսկ պղտորված ազգամիջյան հարաբերությունները: Հեղափոխական խմորումները, քաղաքական տարբեր, հաճախ ներհակ գաղափարները, այդ թվում և սոցիալիստական, ներթափանցել էին ճեմարան: Այդ իրողությունը հաստատում է ոչ միայն Ս. Վրացյանը[14]:

Ս. Վրացյանը Սանկտ Պետերբուրգում ուսմանը զուգընթաց, որը նրանից շատ ժամանակ էր խլում, շարունակում է հետևել հասարակական, քաղաքական, գրական կյանքում տեղի ունեցող իրադարձություններին, ուսումնասիրում ընկերավարական գաղափարներով դիրքորոշված գրականություն, լսում անվանի տեսաբանների դասախոսություններ: Ս. Վրացյանի հուշագրության այս ժամանակաշրջանին վերաբերող բաժինը արժեքավոր տեղեկություններ է պարունակում Ս. Պետերբուրգի հայ ուսանողների, որոնց թիվը հասնում էր մի քանի հարյուրի, միջավայրում առկա գաղափարական շերտավորումների մասին (սոցիալ-դեմոկրատական, ազգային՝ դաշնակցական

---

[11] **Վրացյան Ս.,** նշվ. աշխ., Բ հատ., էջ 63:

[12] Նույն տեղում, էջ 61:

[13] Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Է, Խրիմյան Հայրիկը և ցարական բռնապետությունը (1903 - 1907 թթ.), հատորը կազմեց և առաջաբանը գրեց Ս. Բեհբուդյանը, Երևան, 2000, էջ 17, վավ. № 1:

[14] Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 383 - 384:

և համակիրներ ու ‹‹սպիտակ աստառավորներ››): Հատկանշական մի երևույթ է դիտարկում Ս. Վրացյանը՝ նշելով, որ հայ ուսանողությունը համերաշխ ու համախումբ էր ‹‹ժողով›› անվամբ միության շուրջ, որի գործունեությունը առավելապես տնտեսական բնույթ էր կրում և որը ղեկավարվում էր միության անդամների ընդհանուր ժողովում ընտրված, յոթ հոգուց բաղկացած վարչության կողմից[15]:

Ս. Վրացյանի գործուն մասնակցությամբ Ս.Պետերբուրգում հիմնադրվում է գրական-գեղարվեստական խմբակ, որն իր հավաքույթներում քննարկում էր ժամանակի գրական նոր ստեղծագործությունները, հետևում թատերական կյանքին, արվեստի նորություններին, այցելում թանգարաններ, ունկնդրում հայտնի դասախոս-տեսաբանների ելույթներ[16]: Համալսարանում նա ներկա է լինում Ն. Ադոնցի առաջին դասախոսությանը, այնուհետև հայ ուսանողների հետ կազմակերպում որոշակի թվով ուսանողների ներկայություն Ն. Ադոնցի դասերին, որն անհրաժեշտ էր նրա պաշտոնավարության համար:

Ս.Պետերբուրգում ուսանելու ժամանակ Ս. Վրացյանը Թիֆլիսի մամուլի պաշտոնական թղթակից էր և հաճախ ներկա էր լինում Պետական Դումայի նիստերին, տեղեկություններ և իր տպավորությունները հաղորդում Թիֆլիս: Ետադարձ հայացքով գնահատելով իր կյանքի այդ ժամանակահատվածը, Ս. Վրացյանը գրում է. ‹‹Ուսանողության տարիները փորձառության մի նոր շրջան եղան ինձ համար մայրաքաղաքի մտավոր և հասարակական հետաքրքրական միջավայրում: Ռուսաստանի ամենանշանավոր ուսուցչապետների դասախոսությունները, գրական և այլ կարգի ժողովները, թատրոնն ու թանգարանները, հարատև ընթերցանությունը և շփումը մտավորական շրջանակների և անհատների հետ՝ լայն հորիզոններ բացին իմ մտքի առջև. Պետերբուրգը լրացրեց էջմիածնի ճեմարանի թերիները››[17]: Ս. Վրացյանը բարձրագույն կրթությունն ավարտել է 1910 թ. ամռանը:

1909 թ. ամռանը Տրապիզոն-Կարին ճանապարհին դավադրաբար սպանվում է դաշնակցական գործիչ է. Թոփչյանը: Ուսանողությունը որոշում է նրա հիշատակին նվիրված մի ժողվածու հրատարակել ‹‹Պսակ›› վերնագրով, որի հրատարակության կազմողն ու խմբագիրը Ս. Վրացյանն էր: Երբ ժողվածուն պատրաստ էր, ֆինանսական միջոցների սղության պատճառով այն մնում է տպարանում: Ս. Վրացյանը հարկադրաբար հեռանում է Ռուսաստանից, գրաքննությունը բռնագրավում է ժողվածուի ողջ տպաքանակը և այրում: Պահպանվել է ‹‹Պսակի›› միակ օրինակը, որը Կարինում Ս. Վրացյանը ստացել էր տպարանատիրոջից և այժմ գտնվում է Բեյրութի Մարտիկյան թանգարանում[18]:

Ցարական ոստիկանությունը հետապնդում էր Ս. Վրացյանին և նա հարկադրված հեռանում է Ռուսաստանից, հանգրվանում Կարինում: Նա Կարին է հասնում 1910 թ.

---

[15] **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., Բ հատ., էջ 116:

[16] Նույն տեղում, էջ 117 - 118:

[17] Նույն տեղում, էջ 127:

[18] **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., Բ հատ., էջ 124 - 127, **Գևորգյան Հ.**, Ս. Վրացյան, Նշանավոր ճեմարանականներ, Երևան, 2005, էջ 389:

նոյեմբերին[19]: Մինչ այդ նա մի կարճ ժամանակ կանգ է առնում Կ.Պոլսում, հիասթափվում պոլսահայ ազգային միջավայրից ու համոզվում, որ այն հիրավի ‹‹Սոդոմ-Գոմոր›› է[20]: Ապա լինում է Արմաշում, Ադաբազարում, ելույթներ ունենում տեղի աշակերտության ու երիտասարդության կազմակերպած հավաքույթներում[21]: Տնտեսագիտության թեմայով իր դասախոսության վերաբերյալ Ս. Վրացյանը հումորով նկատում է. ‹‹Մի դասախոսություն էլ ես տվի հասարակության **Ֆրանսական սինդիկալիզմի** մասին... (*ընդգծումը հեղ.*, -*Ա.Բ.*): Ադաբազա՜ր և ֆրանսական սինդիկալիզմ: Եթե ինձանից զատ մեկը մի բան հասկացավ, կարող էի շնորհավորել››[22]: Սակայն ուսուցչությամբ զբաղվելու նրա ցանկությունը դեռ չի իրագործվում: Կարինում Ս. Վրացյանը վարում է երեք պաշտոն. տեղական երիտասարդական միության ‹‹Հառաջ›› թերթի խմբագրի, Սանասարյան ուսումնարանի վարժապետանոցում՝ ‹‹քաղաքական տնտեսության և մանկավարժական հոգեբանություն›› առարկաների և Հռիփսիմյան օրիորդաց վարժարանի ավարտական դասարանում՝ ‹‹Հայոց պատմություն›› առարկայի ուսուցչի[23]: Կարինում նա մնում է մոտ մեկ տարի և այդ կարճ ժամակամիջոցում հաջողությամբ կատարում իր պարտականությունները: Մանկավարժությունից ու խմբագրական աշխատանքից զատ, Կարինում Ս. Վրացյանը կազմակերպական աշխատանք է տանում: Այսպես, տեղի երիտասարդ ‹‹գրագետների›› ուժերով նա կազմակերպում է գեղարվեստասիրաց միություն, որի նպատակն էր ուսումնասիրել գրական ու արվեստի գործեր: Սակայն միությունը կարճ կյանք է ունենում[24]: Ս. Վրացյանը խոր ափսոսանքով է հիշում Կարինի վառվռուն հայրենասեր երիտասարդությանը, հանդիպած մարդկանց, որոնցից ‹‹Շատերը այլևս չկան. ոմանք էլ հեռու են: Հեռու են ոչ միայն աշխարհագրությամբ, այլ, ավա՜ղ, նաև հոգեկան տարածությամբ››[25]:

Թուրքիայում ապրելու ժամանակահատվածում Ս. Վրացյանը հնարավորություն է ունենում մոտիկից ծանոթանալու արևմտահայության որոշ հատվածների տնտեսական ու հասարակական կյանքին: Վերը նշեցինք Արմաշն ու Ադաբազարը: Նա հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Քղիի, Ծերմակի հայ բնակչության կյանքի ու կենցաղի վերաբերյալ[26]:

1911 թ. աշնանը Ս. Վրացյանը մեկնում է ԱՄՆ, կուսակցության հանձնարարությամբ ստանձնում ‹‹Հայրենիք›› պարբերականի խմբագրի պաշտոնը[27]: Սակայն նրա կապը Կարինի հետ չի ընդհատվում, դպրոցը մնում է նրա ուշադրության կենտրոնում: Հեռվից հեռու նա փորձում է գործնական օգնություն ցույց տալ. ‹‹Հռիփսիմյանի (*Կարինի*

---

[19] **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., Բ հատ., էջ 151, 156:

[20] Նույն տեղում, էջ 128 - 129:

[21] Նույն տեղում, էջ 130 - 139:

[22] **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., Բ հատ., էջ 138:

[23] ՀԱԱ, ֆ. 9, գ. 29, թ. 462:

[24] **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., Բ հատ., էջ 169:

[25] Նույն տեղում, էջ 204:

[26] Նույն տեղում, էջ 205 - 226:

[27] Նույն տեղում, էջ 179, “Ալիք”, Թեհրան, 1945, մայիսի 19:

օրիորդոց վարժարանը, *-Ա.Բ.*) աղջիկները շնորհակալություն են հայտնում ուղարկածդ քարտեսների և [կենդանի] պատկերների համար: Եթե այդքան բարի ես, մի մոգական պատկեր էլ չուղարկե՞ս››, - գրում է Ռոստոմը 1914 թ. ապրիլի 2 -ին Կարինից[28]:

Ս. Վրացյանին հուզող հարցերից կարևորագույնը արևմտահայերի ֆիզիկական գոյության ապահովությունը, ժողովրդին զինելն ու ինքնապաշտպանության կազմակերպելն էր: Ի պատասխան նրա անհանգստության, Ռոստոմը 1914 թ. ապրիլի 2-ին հասարակական-քաղաքական միջավայրը բնութագրող հետևյալ տողերում իր դժգոհությունն է հայտնում հայ հարուստների անտարբերության կապակցությամբ. ‹‹Դուք՝ ամերիկացիներդ, իզուր եք կարծում, թե մենք խրվել ենք դպրոցական գործի մեջ և ինքնապաշտպանության համար ոչինչ չենք անում: Բացարձակ կերպով սխալ է այդ: Դպրոցը՝ իր հերթին, բայց մեր գլխավոր մտահոգությունը ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանությունն է: Գիտես՝ ինչ օրեր ենք ապրում: Պոլսեցիք տարված են բարենորոգումների հուսով և պառլամենտարիզմով: Երանի հավատացելոց: Այդ բոլորը լավ, բայց մեր հույսը պետք է մեր վրա դնենք››[29]:

1911 - 1914 թթ. ապրելով և աշխատելով Միացյալ Նահանգներում՝ Ս. Վրացյանը բացի իր պարտականությունները, նաև քարոզչական, կազմակերպչական աշխատանքներ է կատարում արդեն բազմամարդ ու բազմաշերտ դարձած հայ գաղութի միջավայրում, նամակագրական աշխույժ կապ պահպանում հատկապես Արևմտյան Հայաստանի գործիչների՝ Ս. Զավարյանի, Հ. Շահրիկյանի, բժ. Հ. Զավրիյանի, Ա. Մանուկյանի, Սիամանթոյի, Է. Ակնունու, Ա. Վռամյանի, Մ. Վարանդյանի հետ[30]: Այդ կերպ նա զգալի չափով տեղեկանում էր Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև Անդրկովկասում և շուրջը տեղի ունեցող իրադարձություններին:

Ի մի բերելով մեր շարադրանքը Ս. Վրացյանի հասարակական քաղաքական վաղ շրջանի գործունեության մասին՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների:

1. Ս. Վրացյանը հասարակական-քաղաքական ասպարեզ է մտել երիտասարդ տարիքում: Ընտանեկան միջավայրի, կրթության ազդեցությամբ ձևավորվել են նրա ազգային-հասարակական հայացքները, որոնց նա հավատարիմ մնաց ցմահ:

2. 1909 - 1911 թթ. Ս. Վրացյանը, խուսափելով ցարական իշխանությունների հետապնդումներից, գնում է Կարին, որտեղ աշխատում է որպես ուսուցիչ, խմբագրում տեղական ‹‹Հառաջ›› թերթը: 1911 - 1914 թթ. նա մեկնում է Հյուսիսային Ամերիկա, որտեղ ծավալում է լայն հասարակական գործունեություն և խմբագրում ‹‹Հայրենիք›› թերթը:

---

[28] **Վրացյան Ս.**, Հին թղթեր նոր պատմության համար (այսուհետև՝ Հին թղթեր), Բեյրութ, 1962, էջ 26:

[29] **Վրացյան Ս.,** Հին թղթեր, էջ 24:

[30] **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., Բ հատ., էջ 17 - 52: